



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 դեկտեմբերի 2017 թ.

N 232-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությանը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը հաստատելու մասին» N 29-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) N 1 հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կամ 3-րդ» բառերը.
- 2) N 1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
«2) հեռակա ուսուցմամբ».
- 3) N 1 հավելվածից հանել 12-րդ կետը.
- 4) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

5) N 3 հավելվածից հանել «Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ», «021201.00.6 Դիզայն», «021201.01.6 Դիզայն» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականին և դրանից հետո միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողների վրա:



Բ. ՍԱԿԱԿՅԱՆ

01-93
7 ԳԵՆԵՐԱԿՆԵՐ ԸԴ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 5-ի N 232-Ն որոշման

«Հավելված 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«26» հունվարի 2010 թվականի թիվ 29-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՄ Է
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԼԵՋ

- 0402 Մանկաքարձական գործ
- 0405 Դեղագործություն
- 0406 Քույրական գործ
- 0418 Բուժական գործ զինված ուժերում

ՇՈՒՇԻԻ ԱՐՄԵՆ ԽԱՀԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԼԵՋ

- 0210 Թարգմանություն և սպասարկման կազմակերպում
- 0312 Դասավանդում տարրական դասարաններում
- 0514 Դիզայն ըստ ճյուղերի
- 0515 Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ
- 0518 Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն
- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 2014 Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում
- 2307 Զբոսաշրջություն

«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 0602 Մենեջմենթ (Կառավարում)
- 0603 Ֆինանսներ

- 0612 Ապրանքագիտություն
- 2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում
- 2916 Քաղաքաշինական կադաստր
- 3101 Հողաշինարարություն
- 3102 Գյուղատնտեսագիտություն
- 3104 Անասնաբուժություն
- 3106 Գյուղատնտեսության մեքենայացում

**ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

- 0207 Թարգմանություն և գործավարություն
- 0302 Հայոց լեզվի դասավանդում
- 0303 Ռուսաց լեզվի դասավանդում
- 0307 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ
- 0312 Դասավանդում տարրական դասարաններում
- 0313 Նախադպրոցական կրթություն
- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 0602 Մենեջմենթ (Կառավարում)
- 0603 Ֆինանսներ
- 2203 Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրավորում
- 2307 Զբոսաշրջություն
- 2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԻՑԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՔԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ԼԱԶԱՐՅԱՆ